մահտեսի Բաղիշեցի խջայ. Եաղուպին թվին ՌՃԻ (=1655) որք հանդիպիք սմա Ա.Ծ. ողորմի ասացէք և Զեզ Տէր ողորմի»։

ՎԱՐԴԱՆ ՔՀ. ԴԸՐՄԱՅԵՑԻ.— Ցիշատակարանի մը համաձայն Աւետարան մը կը նուիրէ Ս. Յակոբի վանքին « . . . սբ. Աւետարանս Դ.ըրմայեցի տէր Վարդան քՀ.ն և իւր երեցկնոջն և զաւակացն.. ետ յիշատակ ի սբ. յերուսաղէմ ի դրունս գեբահրաչ վանուց սբյն. Յակոբայ առաքելոյ անջնջելի յիշատակ։ Արդ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքս Կաֆայ ընդ հովանեաւ Ս. Նիկողոսի եկեղեցւոյ, Հայոց թվին ՌՃ (=1651), ձեռամբ Քրիստոսատուր երիցու...»։ (Խապ. Ցուց. տետր ԺԱ. էջ 838)։

ՎԱՐԴԱՆ ՔՀ. ՇԱՄԱԽԵՑԻ.— 1803 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եւ վերադարձին կը հանդիպի Ս. Էջմիածին։ (Տե՛ս Կոնդակ Դաւիթ կթղ.ի, Դիւան, Գիրք Է. էջ 225 և 239)։

ՎՐԹԱՆԷՍ ԱԲ. ԱՐԱՐԱՏՑԻ.— Հալէպի Ս. Քառասնից եկեղեցիին (Թ. 71) ձեռագիր Դանձարանը Վրթանէս աբ. Արարատցի, 1497ին ընդօրինակած է Ս. Յակոբի վանքին մէջ, հետեւեալ յիշատակարանին համաձայն. «... Եւ արդ գրեցաւ սա ի քաղաքս սուրբ երուսաղէմս, ընդ հովանեաւ ս. Յակոբիս եւ այլ սուրբ տնաւրինականացս Քրիստոսի։ Յամս հայրապետութեան Հայոց Ոհանէս կաթողիկոսի, եւ եպիսկոպոսութեան Տէր Մարտիրոսի, եւ ըռեխութեան Յովհաննէսի կուզ կոչեցեալ, եւ Մուղասիմին, որ սուրբ Յակոբայ գլուխն նորոգեցին, և զծնունդն չինեցին տրաւք Քրիստոնէից. եւ փակաւ սուրբ Յակոբայ Տէր կարապետին, եւ սուլթան Մսրայ ոչ ոք կայր, զի մեծ սուլթանն . . . . . էր և որդի նորա ոչ կարէր թագաւորել. զի ասէին թէ չէ արժան. այլ Աստուած ի բարին կատարէ ամէն։

Արդ՝ որք հանդիպիք սմա, տեսութեամբ կամ աւգտութեամբ ինչ իւիք. և ի պատկանաւոր խնդրուածս, զՏէր Աւագս և... յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք ամէն։

Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զՄարիամ Մայրապետն մեր և որ սպասաւորէր մեզ կերաւք. և որ զԱմէնն ասէ. Աստուած ողորմի նմա ամէն»։ (Տե՛ս Սիոն, 1928, էջ 273, նաև Հալէպ, Ցուց. Թ. 71)։